



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 8

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2011 թվականի օգոստոսի 25-ից

● ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ	4, 56
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 58</i>
 ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	 11, 62
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>13, 64</i>
 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	 16, 66
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i>	<i>18, 68</i>
 ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	 20
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	<i>22</i>
 <i>Տեղեկություններ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների մասին</i>	 <i>47</i>
 <i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	 <i>48</i>
 ՑՈՒՑԻՉՆԵՐ	 49
 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	 51
 ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	 69

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-
технологического обеспечения

Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 56
Сведения о выданных патентах.....	6, 58
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	11, 62
Сведения о выданных патентах.....	13, 64
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	16, 66
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	18, 68
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	20
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	22
Сведения об общеизвестных товарных знаках	47
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	48
УКАЗАТЕЛИ.....	49
СООБЩЕНИЯ.....	51
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	69

CONTENTS

INVENTIONS.....	4, 56
Information on granted patents.....	6, 58
UTILITY MODELS.....	11, 62
Information on granted patents.....	13, 64
INDUSTRIAL DESIGNS.....	16, 66
Information on registered industrial designs.....	18, 68
TRADE MARKS.....	20
Information on registered trade marks and service marks	22
Information on well-known trade marks.....	47
Information on renewal of effect of trademark registration	48
INDEXES.....	49
REPORTS.....	51
TWO-LETTER CODES.....	69

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը A գյուտի արտոնագիր B արտոնագրաունակության մասին եզրակացություն
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71	հայտատուն, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2011.01) (11) 2537 (13) A
A61C 13/00
A61C 9/00
 (21) **AM20110010** (22) **10.02.2011**
 (71) Կարեն Արմենի Մաշինյան (AM), Մարինե Սահակի Պետրոսյան (AM), Սերգո Ռոբերտի Հովհաննիսյան (AM), Խաչիկ Ռազմիկի Տիգրանյան (AM)
 (72) Կարեն Արմենի Մաշինյան (AM), Մարինե Սահակի Պետրոսյան (AM), Սերգո Ռոբերտի Հովհաննիսյան (AM), Խաչիկ Ռազմիկի Տիգրանյան (AM)
 (73) Կարեն Արմենի Մաշինյան, 0090, Երևան, Շոպրոնի փող. 2-րդ նրբ. 8, բն. 8 (AM), Մարինե Սահակի Պետրոսյան, 0078, Երևան, Մազմանյան 12, բն. 13 (AM), Սերգո Ռոբերտի Հովհաննիսյան, 0033, Երևան, Ա. Խաչատրյան 11, բն. 50 (AM), Խաչիկ Ռազմիկի Տիգրանյան, Արարատի մարզ, գ. Ն. Դվին, Գայի փ. 6 (AM)
 (54) **Անշարժ ժամանակավոր ատամնապրոթեզների ներբերանային պատրաստման եղանակ**
 (57) Գյուտը վերաբերում է օրթոպեդիկ ստոմատոլոգիային, մասնավորապես՝ անշարժ ժամանակավոր ատամնապրոթեզների ներբերանային պատրաստման եղանակներին:
 Ծնոտի անատոմիա հատվածում հարմարեցնում են պլաստմասսայե ստանդարտ ատամ և հոսուն լուսակարծրացող կոմպոզիտի միջոցով ամրակցում այն չհղկված հենակետային ատամներին: Հենակետային ատամները հղկելուց հետո, դրանց մակերեսը պատում են լուսակարծրացող դիմերթիլդիուրեթանակրիլատի շերտով, որի պոլիմերացումից հետո անջատում են ստացված թասակները և հղկում դրանց արտաքին մակերևույթը մինչև շերտի 0,4 - 0,5 մմ հաստություն: Հենակետային հղկված ատամները և լորձաթաղանթը մեկուսիչ պաշտպանիչ շերտով պատելուց հետո թասակները վերատեղադրում են հղկված ատամների վրա: Ստանում են պրոթեզավորման հատվածի դրոշմը, հղկում հենակետային երկու ատամները, պատում հղկված ատամները և լորձաթաղանթը մեկուսիչ պաշտպանիչ շերտով, դրոշմի մեջ լցնում են ինքնակարծրացող պլաստմասսայի խմոր և

դրոշմը վերատեղադրում հղկված ատամների վրա, հեռացնում են դրոշմը պոլիմերացված կառույցի հետ միասին, դուրս են բերում կառույցը դրոշմից և ցեմենտավորում այն հղկված ատամների վրա:

Բարձրացվում է ծամողական արդյունավետությունը, կանխվում է ատամների տեղաշարժը և ենթադիր հյուսվածքների վնասումը:

(51) (2011.01) (11) 2538 (13) A
B02B 3/00
 (21) **AM20110049** (22) **21.04.2011**
 (71) Սամվել Լիպարիտի Սահակյան (AM)
 (72) Սամվել Լիպարիտի Սահակյան (AM)
 (73) Սամվել Լիպարիտի Սահակյան, 0010, Երևան, Հյուսիսային պող.10, բն.12 (AM)
 (54) **Հատիկների թեփահանիչ-հղկող մեքենա**
 (57) Գյուտը վերաբերում է ծավառեղենի արտադրության տեխնոլոգիական սարքավորումներին, մասնավորապես՝ ցորենի և գարու հատիկների թեփահանման և հղկման մեքենաներին:
 Մեքենան ունի բեռնման հարմարանք, իրան, սնամեջ լիսեռ, որի վրա համառանցք ամրակցված են հղկաքարերն ու թևերը, մաղ: Մեքենան ունի նաև հումքի ելքը կարգավորող փականով կարճախողովակ և թեփի հեռացման կարճախողովակ: Իրանը, մաղն ու հղկաքարերն ունեն հատած կոնի տեսք, իսկ հղկաքարերի և մաղի միջև բացակը կարգավորվում է մաղը իրանին ամրակցող հեղույսներով:
 Բարձրացվում են թեփահանման արդյունավետությունն ու որակը, նվազում են էներգածախսերը, 1 նկ.:

(51) (2011.01) (11) 2539 (13) A
C01F 7/16
 (21) **AM20100020** (22) **10.02.2010**
 (71) Սերգեյ Սահարունյան (AM), Անահիտ Սարգսյան (AM), Իրինա Մակարյան (AM), Էդիտա Նազարյան (AM)

(72) Սերգեյ Սահարունյան (AM), Անահիտ Սարգսյան (AM), Իրինա Մակարյան (AM), Էդիտա Նազարյան (AM)

(73) Սերգեյ Սահարունյան, 0051, Երևան, Գրիբոյեդովի 3, բն.33 (AM), Անահիտ Սարգսյան, 0012, Երևան, Կոմիտասի պող. 25, բն. 37 (AM), Իրինա Մակարյան, 0051, Երևան, Գրիբոյեդովի 5ա, բն.21 (AM), Էդիտա Նազարյան, 0051, Երևան, Գրիբոյեդովի 26, բն.41 (AM)

(54) Ցածրորակ ալյումինային հումքի հարստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է քիմիական տեխնոլոգիայի բնագավառին, մասնավորապես՝ ալյումինով աղքատ հանքանյութի հարստացման եղանակներին և կարող է կիրառվել արգենտիտի, տարբեր մետաղների սիլիկատների, սիլիկատների և ալյումինի այլ միացությունների արտադրությունում:

Մանրացված նեֆելինային ապարից կամ պեռլիտից և կաուստիկ սոդայից պատրաստված բովախառնուրդը, որի մեջ $\text{Na}_2\text{O}:\text{SiO}_2$ հարաբերակցությունը հավասար է (1.6-2.0) : 1.0, եռակալում են 350-400°C ջերմաստիճանում 30-35 րոպեի ընթացքում: Ստացված եռակալվածքը սառեցնում են և դրանից լուծազատում լուծելի սիլիկատի հիմնասիլիկատային լուծույթի ձևով: Ստանում են խտանյութ, որի մեջ Al_2O_3 -ի պարունակությունը հասնում է մոտ 30 զանգվ. %-ի: Լուծույթը վերամշակում են տարբեր մետաղների սիլիկատների և սիլիկատների, իսկ ալյումինով հարստացած խտանյութը հայտնի եղանակով վերամշակում են ալյումինի հիդրօքսիդի, ալյումինի օքսիդի և այլ միացությունների:

Պարզեցվում է եղանակը, բարձրացվում է ապարներում պարունակվող օգտակար բաղադրիչների կորզման աստիճանը:

(51) **(2011.01)** (11) **2540** (13) **A**
C02F 11/00
C02F 3/00

(21) **AM20110030** (22) **21.03.2011**

(71) Նազելի Վահանի Գևորգյան (AM)

(72) Նազելի Վահանի Գևորգյան (AM), Էրնեստ Վահանի Ղազարյան (AM)

(73) Նազելի Վահանի Գևորգյան, 0065, Երևան, Մարտիկյան 35 (AM)

(54) Կենսազանգվածի խառնման համակարգ
(57) Գյուտը վերաբերում է օրգանական թափոնների բնագավառին, մասնավորապես՝ գյուղատնտեսական և կենցաղային թափոնների վերամշակման սարքերին:

Համակարգն ունի տաքացիչով կենսառեակտոր, նրա վրա տեղակայված հումքի լցման և խմորված զանգվածի հեռացման խողովակներ: Կենսառեակտորի ներքին մասում տեղակայված է բարբոտյոր, իսկ վերին մասին միացված է հետադարձ կապով խողովակ, որը միացված է նաև բարբոտյորին: Հետադարձ կապով խողովակի վրա տեղակայված են գազամբարից կենսազանգվածի մատուցման և հետադարձ կապի փականները, մղիչը, ճնշման տվիչը, ինքնաբերականորեն մոնիթորինգի և կապով խողովակին միացված է դիֆերենցիալ ռելեի մուտքերից մեկը: Դիֆերենցիալ ռելեի մյուս մուտքը միացված է անալոգա-դիսկրետային կերպափոխիչին, ելքը՝ մղիչին, գազամբարից կենսազանգվածը տալու և հետադարձ կապի փականներին:

Բարձրացվում է կենսազանգվածի խմորման ինտենսիվությունը, բացառվում է կենսառեակտորի պատերի մոտակայքում կոշտուկների գոյացումը, կրճատվում է էլեկտրաէներգիայի ծախսը, ավտոմատացվում է կենսազանգվածի մատուցման և հեռացման ամբողջ տեխնոլոգիական գործընթացը, 1 նկ.:

(51) **(2011.01)** (11) **2541** (13) **A**
C11C 1/00

(21) **AM20110004** (22) **27.01.2011**

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Նարինե Տիգրանի Կարապետյան (AM), Սահակ Տիգրանի Կարապետյան (AM), Վարդան Արթուրի Կարապետյան (AM), Դավիթ Սարգսի Բաղդուրյան (AM), Ռոմիկ Աղվանի Ստեփանյան (AM), Մարինե Մարգարետունու Աջամօղլյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Խաղողի մամլվածքից սերմերի անջատման հոսքագիծ

(57) Խաղողի մամլվածքից սերմերի անջատման հոսքագիծն ունի ըստ տեխնոլոգիական գործընթացի տեղեկայված թեքադիր քերակավոր փոխադրիչ, անշարժ և շարժական մատնաշարերով փխրեցուցիչ, խառնիչ զետեղարան, դրան միացված հեղուկի մղիչ, հիդրոցիկլոն, սերմերը հեղուկից անջատման հանգույց և չորացման հանգույց: Խառնիչ զետեղարանը իրականացված է կիսամիջնապատով երկու աշխատանքային գոտիների բաժանված ֆլոտացիոն կայանքի տեսքով, որն ունի խառնիչ և քերակներ ունեցող բանվորական անիվ, որը տեղափոխում է «աղբային» զանգվածը զետեղարան: Ֆլոտացիոն կայանքը մղիչով միացված է հիդրոցիկլոնին՝ իր մնացորդի զետեղարանով և ջրահեռացման խողովակաշարով: Հիդրոցիկլոնի ստորին մասում տեղակայված է սերմերը հեղուկից անջատման հանգույցը, որը իրականացված է 90°-ով պարբերական պտտման հնարավորություն ունեցող բաժնաչափիչ փականի տեսքով, որին միացված է հեղուկի հեռացման խողովակաշար: Բաժնաչափիչ փականին միացված է չորացման հանգույցը, որը իրականացված է անջատված սերմերի չորացման երկհարկանի տեղակայանքի տեսքով, որն ունի թրթռացող ցանցահարթակներ, դրանց տատանողական շարժում հաղորդող թրթռիչով և ցանցահարթակային խոռոչներին տաք օդի հոսանք մատուցող ջեռուցման ու օդամղման բլոկներ: Չորացման տեղեկայանքն ունի երկու ելք, որոնցից մեկը միացված է օդի մաքրման աերոցիկլոնային բլոկին և մնացորդի կուտակարանին, իսկ մյուսը՝ չորացման տեղակայանքի զանգվածը հարկից հարկ տեղափոխող ճոռերի միջոցով սերմերի մագնիսական զտիչին և մաքրված սերմերի հավաքարանին:

Ապահովվում է խաղողի մամլվածքից սերմերի անջատման և մաքրման գործընթացների արդյունավետության զգալի բարձրացումը, 1 նկ.:

(51) (2010.01) (11) 2542 (13) A
E04B 1/00
(21) AM20100024 (22) 26.02.2010
(71) Էրիկ Աշոտի Դաստակյան (AM)
(72) Էրիկ Աշոտի Դաստակյան (AM), Ռուդոլֆ

Սարգիսի Հովսեփյան (AM), Աշոտ Գեորգիի Սիմոնյան (AM)

(73) Էրիկ Աշոտի Դաստակյան, 0025, Երևան, Կորյունի 5, բն.64 (AM)

(54) **Օդային աղմուկից պատող կոնստրուկցիաների ձայնամեկուսացման ինդեքսի որոշման սարք**

(57) Գյուտը վերաբերում է օդային աղմուկից պատող կոնստրուկցիաների որակի որոշման սարքերին և կարող է կիրառվել բնական և լաբորատոր պայմաններում:

Սարքի միջոցով ձայնամեկուսացման ինդեքսը որոշելիս հաշվի է առնվում ընդունող տարածքի հետարձագանքման հատկությունը, այսինքն, ընդունող տարածքի պատող մակերևույթներից անդրադարձումները: Ձայնամեկուսացման ինդեքսը որոշվում է հաճախային բնութագրերը համեմատելով գնահատման կորի հետ:

Բարձրացվում է ձայնամեկուսացման ինդեքսի որոշման ճշգրտությունը, 2 նկ.:

(51) (2011.01) (11) 2543 (13) A
H01F 7/00
H01H 51/00
(21) AM20100010 (22) 27.01.2010
(71) Վաչագան Պետրոսյան (RU)
(72) Հրայր Ահարոնյան (AM), Վաչագան Պետրոսյան (RU)
(73) Վաչագան Պետրոսյան, 123182, Մոսկվա, Ավիացիոննայա 59, բն. 558, 559 (RU)
(54) **Ներծգվող խարիսխով էլեկտրամագնիս**
(57) Գյուտը վերաբերում է ներծգվող խարիսխի առաջընթաց շարժումով էլեկտրամագնիսներին և կարող է օգտագործվել էլեկտրասարքավորումներում, էլեկտրամագնիսական ռելեններում, շարժաբեր սարքերում մագնիսական փականքներում և այլ արտադրություններում:

Էլեկտրամագնիսն ունի մագնիսաձողերից և կցարկից կազմված միջուկ, կոճեր, որոնք տեղակայված են միջուկի պատուհաններում այնպես, որ կոճերի անցքերի առանցքները զուգահեռ են միջուկի մագնիսաձողերին, ներծգվող խարիսխ, որը կազմված է նիստից և մագնիսաձողերից, և հետադարձ մեխանիզմ:

Խարիսխի մագնիսաձողերը համառանցք են կոճերի անցքերին, իսկ դրանց թիվը հավասար է կոճերի թվին:

Միջուկը և խարիսխը կատարված են սանդերքաձև:

Էլեկտրամագնիսի հետադարձ մեխանիզմը տեղակայված է միջուկի և խարիսխի միջև և կատարված է ֆեռոմագնիսական նյութից պատրաստված զսպանակների ձևով:

Նվազեցվում է էլեկտրամագնիսի նյութատարությունը, բարձրացվում է նրա ներծգման ճիգը, ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 5 նկ.:

(51) (2011.01) (11) 2544 (13) A
H03K 19/00

(21) AM20110055 (22) 05.05.2011

(71) Օլեգ Պետրոսյան (AM), Վարդան Գրիգորյանց (AM)

(72) Օլեգ Պետրոսյան (AM), Վարդան Գրիգորյանց (AM)

(73) Օլեգ Պետրոսյան, 0033, Երևան, Հ.Էմինի 5, բն. 52 (AM), Վարդան Գրիգորյանց, 0025, Երևան, Աբովյան 48, բն. 15 (AM)

(54) Ֆորմալ նեյրոն

(57) Գյուտը վերաբերում է միկրոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի բնագավառներին և կարող է օգտագործվել արհեստական բանականության սարքերում, զուգահեռ ծրագրավորման մեջ, գերարագագործ համակարգիչների և ինտեգրալ սխեմաների կառուցման համար:

Ֆորմալ նեյրոնն ունի **p** հոսքուղիով վեց տրանզիստոր և **n** հոսքուղիով հինգ տրանզիստոր: **p** հոսքուղիով առաջին և երկրորդ տրանզիստորների արտաբերները միացված են սնման աղբյուրին, իսկ փականները՝ **p** հոսքուղիով առաջին տրանզիստորի ակունքին և նեյրոնի մուտքերին: **p** հոսքուղիով երկրորդ տրանզիստորի ակունքը և **n** հոսքուղիով առաջին տրանզիստորի արտաբերը միավորված են: **n** հոսքուղիով առաջին տրանզիստորի փականը միացված է շեմային լարման առաջին

աղբյուրին, իսկ ակունքը հողանցված է: **p** հոսքուղիով երկրորդ, չորրորդ և հինգերորդ տրանզիստորների արտաբերները միացված են սնման աղբյուրին: **p** հոսքուղիով չորրորդ և **n** հոսքուղիով երրորդ տրանզիստորների փականները միացված են **n** հոսքուղիով առաջին տրանզիստորի արտաբերին և **p** հոսքուղիով երկրորդ տրանզիստորի ակունքին: **p** հոսքուղիով առաջին, երկրորդ և երրորդ տրանզիստորների փականները միավորված են: **p** հոսքուղիով վեցերորդ և **n** հոսքուղիով հինգերորդ տրանզիստորների փականները միացված են **p** հոսքուղիով երրորդ տրանզիստորի ակունքին և **n** հոսքուղիով երկրորդ տրանզիստորի արտաբերին, վերջինիս փականը միացված է շեմային լարման երկրորդ աղբյուրին, իսկ ակունքը հողանցված է: **p** հոսքուղիով չորրորդ տրանզիստորի ակունքը և **n** հոսքուղիով երրորդ տրանզիստորի արտաբերը միացված են **p** հոսքուղիով հինգերորդ և **n** հոսքուղիով չորրորդ տրանզիստորների փականներին: **n** հոսքուղիով չորրորդ և հինգերորդ տրանզիստորների արտաբերները և **p** հոսքուղիով վեցերորդ տրանզիստորի ակունքը միացված են նեյրոնի ելքին: **p** հոսքուղիով վեցերորդ տրանզիստորի արտաբերը միացված է **p** հոսքուղիով հինգերորդ տրանզիստորի ակունքին: **n** հոսքուղիով երրորդ, չորրորդ և հինգերորդ տրանզիստորների ակունքները հողանցված են:

Ընդլայնվում են ֆորմալ նեյրոնի ֆունկցիոնալ հնարավորությունները, 7 նկ.:

(51) (2011.01) (11) 2545 (13) A
H05B 6/00
F24H 1/00

(21) AM20110050 (22) 28.04.2011

(71) Ժան Դավիթի Դավիդյան (AM), Պարգև Սուրենի Մանուկյան (AM), Աննա Մարտինի Հարությունյան (AM)

(72) Ժան Դավիթի Դավիդյան (AM), Պարգև Սուրենի Մանուկյան (AM), Աննա Մարտինի Հարությունյան (AM)

(73) Ժան Դավիթի Դավիթյան, 0002, Երևան, Սպենդիարյան 3, բն. 6 (AM), Պարգև Սուրենի Մանուկյան, 0070, Երևան, Վարդանանց 22, բն.35 (AM), Աննա Մարտինի Հարությունյան, 0012, Երևան, Կովկասյան 9 (AM)

(54) **Հեղուկի ինդուկցիոն էլեկտրատաքացիչ**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային և էլեկտրաթերմիային:

Հեղուկի ինդուկցիոն էլեկտրատաքացիչն ունի բաք, որի պատերը պատված են ջերմամեկուսիչ նյութով: Բաքին միակցված են սառը հեղուկի մուտքի և տաքացված հեղուկի ելքի կցախողովակներ: Բաքում տեղակայված է ֆե-

ռոմագնիսական միջուկով տրանսֆորմատոր, որի մագնիսաձողերից մեկի վրա տեղադրված է առաջնային փաթույթը, որը կարգավորիչի միջոցով միացված է էլեկտրասնման աղբյուրին: Տրանսֆորմատորի երկրորդային փաթույթը կարճ միակցված գալար է, որը գոյանում է տաքացվող հեղուկից և հեղուկում ընկղմված տրանսֆորմատորի մագնիսամիջուկի մյուս մագնիսաձողից ու կցարկների մի մասից:

Բարձրացվում են անվտանգությունը և հուսալիությունը, պարզեցվում է կառուցվածքը, 1 նկ.:

*ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ*

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը Ս օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71	հայտատուն, երկրի կոդը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) (2011.01) (11) 256 (13) Ս
A01B 49/00
- (21) AM20110051U (22) 29.04.2011
- (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
- (72) Նորիկ Ավետիսի Բագիկյան (AM), Պարգև Արամայիսի Տոնապետյան (AM), Արամայիս Մյասնիկի Եսոյան (AM), Արամ Պարգևի Տոնապետյան (AM)
- (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
- (54) **Լանջերի հողի շերտավոր մշակման ագրեգատ**
- (57) Ագրեգատն ունի շրջանակ, շրջանակին ամրակցված կանգնակներ, կախոց և հենարանային անիվներ: Շրջանակի առջևի լայնական հեծանի վրա դասավորված են փխրեցման կոմբինացված աշխատանքային օրգաններ՝ կազմված կանգնակների վրա հավաքված հորատադուր-փխրիչներից և միակողմանի հարթահատ թաթիկներից: Հետևի լայնական հեծանի վրա դասավորված են համատարած փխրեցման սլաքաձև թաթիկներով աշխատանքային օրգաններ: Շրջանակին ամրակցված են կոմբինացված աշխատանքային օրգանների դիմաց, լայնական հեծանին ուղղահայաց տեղակայված սկավառակներ: Շրջանակի հետին լայնական հեծանին հողակապերով միակցված է հողի մակերևութային մշակման գլանվակ:
- Բարձրացվում է լանջերի հողի փխրեցվող շերտի ջրակայունությունը, կանխարգելվում է հողի էրոզիան և կրճատվում են էներգածախսերը, 3 նկ.:

- (73) Թելման Նազարյան, 0086, Երևան, Շիրակի փող.4-րդ, նրբ.5, բն. 1 (AM), Արմեն Նազարյան, 0086, Երևան, Շիրակի փող.4-րդ, նրբ.5, բն. 1 (AM)
- (54) **Արհեստական մոմաչեչ**
- (57) Օգտակար մոդելը վերաբերում է մեղվաբուծությանը:
- Մոմաչեչը պատրաստված է մեղվամոմից և ունի երկկողմանի վեցանիստ բջիջներ: Մոմաչեչի ամբողջ մակերևույթի վրա բջիջներն ունեն 8,8 - 9,2 մմ չափեր:
- Ապահովվում է մեծ քանակով պարսամայրեր և մեղվակաթ ստանալու հնարավորությունը, 2 նկ.:

- (51) (2011.01) (11) 258 (13) Ս
C11D 17/00
- (21) AM20110046U (22) 19.04.2011
- (71) Թորգոմ Սեֆերյան (AM), Երվանդ Սեֆերյան (AM), Հրանտ Սեֆերյան (AM)
- (72) Թորգոմ Սեֆերյան (AM), Երվանդ Սեֆերյան (AM), Հրանտ Սեֆերյան (AM)
- (73) Թորգոմ Սեֆերյան, 0061, Երևան, Ֆրունզեի 18, բն.59 (AM), Երվանդ Սեֆերյան, 0061, Երևան, Ֆրունզեի 18, բն.59 (AM), Հրանտ Սեֆերյան, 0061, Երևան, Ֆրունզեի 18, բն. 59 (AM)
- (54) **Պինդ օճառ**
- (57) Օգտակար մոդելը վերաբերում է կենցաղային քիմիային, մասնավորապես՝ պինդ օճառներին:
- Պինդ օճառի ներսում տեղադրված է նրա ծավալի 25-50% կազմող պլաստմասսայե սնամեջ մանրակերտ: Մանրակերտի մակերևույթն անհարթ է:
- Ապահովվում է պինդ օճառի լիակատար օգտագործումը, 1 նկ.:

- (51) (2011.01) (11) 257 (13) Ս
A01K 47/00
- (21) AM20110036U (22) 30.03.2011
- (71) Թելման Նազարյան (AM), Արմեն Նազարյան (AM)
- (72) Թելման Նազարյան (AM), Արմեն Նազարյան (AM)

- (51) (2011.01) (11) 259 (13) Ս
C14B 1/00
- (21) AM20110040U (22) 06.04.2011
- (71) Ռոբերտ Աշոտի Ազարյան (AM), Սուկրատ Մանուկի Մարգարյան (AM)
- (72) Ռոբերտ Աշոտի Ազարյան (AM), Սուկրատ Մանուկի Մարգարյան (AM)

(73) Ռոբերտ Աշոտի Ազարյան, 0031, Երևան, Արամ խաչատրյան 24, բն. 20 (AM), Սոկրատ Մանուկի Մարգարյան, 0069, Երևան, Գոգոլի 85, բն.32 (AM)

(54) Կաշվի վերջնամշակման եղանակ

(57) Օգտակար մոդելը վերաբերում է կաշվի արդյունաբերությանը՝ մասնավորապես, լազերով կաշվի մակերևույթի մշակման եղանակներին:

Ըստ եղանակի, լազերով ստանում են որոշակի խորությամբ կտրվածքներ կաշվի մակերևույթի վրա: Օգտագործում են 8–64 Վտ հզորությամբ գազային լազեր և գործողությունն իրականացնում են 500 - 1000 մմ/րոպե արագությամբ:

Բարելավվում է փորագրված (կտրված) պատկերի որակը, ստեղծվում է հնարավորություն կարգավորել փորագրման խորությունը:

(51) (2011.01) (11) 260 (13) U
E02B 7/00
E02B 13/00

(21) AM20100123U (22) 17.09.2010

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Արմեն Ռազմիկի Բաբայան (AM), Բելլա Վազգենի Բաբայան (AM), Աննա Արմենի Վանյան (AM), Վազգեն Սևոյի Բաբայան (AM), Շավարշ Մացակի Գրիգորյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Ռոռզման ջրի փական-բաշխիչ

(57) Օգտակար մոդելը վերաբերում է գյուղատնտեսական հողատարածքների ռոռզման համակարգերին, մասնավորապես ռոռզման փականներին:

Ռոռզման ջրի փական-բաշխիչն ունի շրջանակ, փական, փականին կոշտ ամրակցված կլոր ձող, բարձրացնող լծակ, արգելակիչ-սևեռակ: Լծակն ունի կլոր անցք և միակցված է ձողին սահող նստեցվածքով: Կլոր անցքով արգելակիչ-սևեռակը մի ծայրով սահող նստեցվածքով միակցված է ձողին, իսկ մյուս ծայրով հողակապով ամրակցված է շրջանակին:

Ապահովվում է փականի արագ գործարկումը, պարզեցվում է կառուցվածքը, 1 նկ.:

(51) (2011.01) (11) 261 (13) U
E06B 3/00

(21) AM20100049U (22) 28.04.2010

(31) RU2009135836 (32) 25.09.2009 (33) RU

(71) «Վեկա-ռուս» ՍՊԸ (RU)

(72) Հայնրիխ Լաուման (DE)

(73) «Վեկա ռուս» ՍՊԸ (RU)

(54) Պլաստմասայե պրոֆիլների համակարգ շինարարական կոնստրուկցիաների որմնանցքերը փակելու բլոկներ հավաքելու համար, շրջանակի պրոֆիլ և փեղկի պրոֆիլ այդ համակարգի համար

(57) Շինարարական կոնստրուկցիաների որմնանցքերը փակելու բլոկներ հավաքելու համար պլաստմասայե պրոֆիլների համակարգը պարունակում է շրջանակի պրոֆիլ և փեղկի պրոֆիլ, որոնց մեջ տեղադրված են ամրանավորման տարրեր: Ինչպես շրջանակի, այնպես էլ փեղկի պրոֆիլն իր մեջ ներառում է ստորին, վերին, կողային արտաքին և կողային ներքին պատեր, որոնք կազմում են փակ սարքաշղթա: Սարքաշղթայի ներսում տեղակայված են միջնորմներ և կողեր, որոնք ձևավորում են օժանդակ օդախցեր: Վերին, ստորին պատերի և երկու հարևան միջնորմների միջև ձևավորված է կենտրոնական խուց՝ ամրանավորման տարր տեղադրելու համար: Շրջանակի ամրանավորման տարրն ունի փակ հատվածք, իսկ փեղկի ամրանավորման տարրի հատվածքը Դ-աձև է, Դ-աձև պրոֆիլի հորիզոնական նիստի ազատ ծայրն ուղղված է փեղկի պրոֆիլի ներքին կողային պատի կողմը:

Ջերմախնայող ներդիրի տեղադրման համար շրջանակի պրոֆիլում ձևավորված է երկրորդ կենտրոնական խուցը: Փեղկի պրոֆիլի ստորին պատի վրա արված է ֆուրնիտուրային փորակ, իսկ վերին պատը իրենից ներկայացնում է հորիզոնական դիրքով տեղակայված ծալուք: Փեղկի պրոֆիլի ստորին պատի վրա ֆուրնիտուրային փորակի և արտաքին կողային պատի միջև կա ուղահայաց հատված, որի մեջ արված է փորակ՝ կիպարարի տեղակայման համար: Կիպարարը ապահովում է փեղկի պրոֆիլի կիպ կցորդումը շրջանակի պրոֆիլի հետ:

Բարձրացվում է ջերմապաշտպանության մակարդակը, պարզեցվում է մոնտաժումը, ապահովվում են կոնստրուկցիայի երկարակեցությունն ու խնայողականությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(74) Զ. Մանուկյան

- (51) (2011.01) (11) 262(13) Ս
F03G 7/00
- (21) AM20100099U (22) 26.07.2010
(71) Ջանիկ Ճավրճյան (AM)
(72) Ջանիկ Ճավրճյան (AM)
(73) Ջանիկ Ճավրճյան, 0056, Երևան, Նոր Նորք
1-ին միկրոշրջան, Բաղյան 1, բն. 25 (AM)
- (54) **Համակցված էներգիայի աղբյուրների
կիրառմամբ էլեկտրաէներգիայի ստացման
գրավիտացիոն կայանք**
- (57) Օգտակար մոդելը վերաբերում է էներգե-
տիկայի բնագավառին և կարելի է օգտագործել
անբարենպաստ բնակլիմայական պայմաններ
ունեցող վայրերի էլեկտրաֆիկացման համար:
Կայանքն ունի ջրի նախնական կուտակման
համակարգ, Արեգակի ճառագայթները կենտրո-
նացնող հայելիների համակարգ, արեգակնային
մարտկոց, հողմային էլեկտրագեներատոր,

էլեկտրաէներգիայի կուտակիչ և ջուրը տե-
ղափոխող էլևատոր: Կայանքում որպես շար-
ժիչ ուժ միաժամանակ օգտագործվում են Արե-
գակի, քամու և գետակի ջրի էներգիաները:
էլեկտրաէներգիա ստանալու համար արեգակ-
նային մարտկոցից և հողմնային էլեկտրագե-
ներատորից ստացված էլեկտրական հոսանք-
ները կերպափոխվում և հաղորդվում են էլեկ-
տրաշարժիչին, որի օգնությամբ պտտում են
էլևատորի փոկը: Գիշերային ժամերին և մառախ-
լապատ պայմաններում օգտագործվում է ջրի և
քամու էներգիան, իսկ արևային ժամերին՝ նաև
Արեգակի էներգիան:

Տարրերի փոխդասավորվածությունը հնա-
րավորություն է տալիս անընդհատ արտադրել
էլեկտրաէներգիա, 1նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	վկայագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
24	գրանցման թվականը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
51	արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)
54	արդյունաբերական նմուշի անվանումը
55	արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
71	հայտատուն(ները), երկրի կոդը
72	հեղինակը(ները), երկրի կոդը
73	իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) **03-01** (11) **256** (13) **S**
 (21) **20110015** (22) **24.05.2011**
 (71) «Սթար Դիվայդ» ՓԲԸ (AM)
 (72) Վահան Քերոբյան (AM)
 (73) «Սթար Դիվայդ» ՓԲԸ, Երևան, Նալբանդյան
 25/14, բն. 51 (AM)
 (54) **Կախազարդ (5 տարբերակ)**
 (55)



1.1



2.1



3.1



4.1



5.1

(51) **09-05** (11) **257** (13) **S**
 (21) **20110012** (22) **12.05.2011**
 (71) Արմեն Մեհրաբյան (AM)
 (72) Արմեն Մեհրաբյան (AM)
 (73) Արմեն Մեհրաբյան, Երևան, Կոմիտաս 7-3,
 բն. 33 (AM)
 (54) **Միանվագ թեյապարկ (2 տարբերակ)**
 (55)



1.1



2.1

- (51) 14-02 (11) 258 (13) S
 (21) 20110006 (22) 24.02.2011
 (71) «Վի Էյ Մաքսմոբայլ» ՍՊԸ (AM)
 (72) Վահրիճ Ավետիսյան (AM)
 (73) «Վի Էյ Մաքսմոբայլ» ՍՊԸ (AM)
 (74) Ա. Գալոյան
 (54) Գովազդատեղեկատվական ինտերնետային տերմինալ
 (55)



1.2



1.1



1.3

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշաններին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) **20100113**
(220) **01.02.2010**

(111) **17219**
(151) **12.07.2011**
(181) **01.02.2020**

(730) Արկոր Էս.Էյ.Այ.Սի, AR
(540)



(526) «bon o bon» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է դեղին, կարմիր, մոխրագույն, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(740) Ռ. Մանասերյան

(210) **20101668**
(220) **15.11.2010**

(111) **17220**
(151) **12.07.2011**
(181) **15.11.2020**

(730) Անհատ ձեռնարկատեր Հովհաննիսյան Դավիթ, Երևան, Կոմիտաս 27/1, AM

(442) 21.01.2011

(540)



(526) «ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է սև, մոխրագույն և մանուշակագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 44. ստոմատոլոգիական բժշկական կլինիկա:

(210) **20101745**
(220) **26.11.2010**

(111) **17221**
(151) **12.07.2011**
(181) **26.11.2020**

(730) Ակցիոներնոյե օբշչեստվո օտկրիտովո տիպա «Գալիչֆարմ», UA

(442) 10.03.2011

(540)

Thiotriazolin

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(740) Ա. Պետրոսյան

(210) **20101746**
(220) **26.11.2010**

(111) **17222**
(151) **12.07.2011**
(181) **26.11.2020**

(730) Ակցիոներնոյե օբշչեստվո օտկրիտովո տիպա «Գալիչֆարմ», UA

(442) 10.03.2011

(540)

Tiocetam

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(740) Ա. Գալոյան

(210) 20101747

(220) 26.11.2010

(730) Ակցիոներնոյե օբշչեստվո օտկրիտովո տիպա «Գալիչֆարմ», ՍՊԸ

(442) 10.03.2011

(540)

Тиотриазолин

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(740) Ա. Պետրոսյան

(210) 20101748

(220) 26.11.2010

(730) Ակցիոներնոյե օբշչեստվո օտկրիտովո տիպա «Գալիչֆարմ», ՍՊԸ

(442) 10.03.2011

(111) 17223

(151) 12.07.2011

(181) 26.11.2020

(540)

Тиоцетам

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(740) Ա. Գալոյան

(210) 20101749

(220) 26.11.2010

(730) Ակցիոներնոյե օբշչեստվո օտկրիտովո տիպա «Գալիչֆարմ», ՍՊԸ

(442) 10.03.2011

(540)

L- лизина эсцинат

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(740) Ա. Պետրոսյան

(210) 20101750

(220) 26.11.2010

(730) Ակցիոներնոյե օբշչեստվո օտկրիտովո տիպա «Գալիչֆարմ», ՍՊԸ

(111) 17226

(151) 12.07.2011

(181) 26.11.2020

(730) Ակցիոներնոյե օբշչեստվո օտկրիտովո
տիպա «Գալիչֆարմ», ՍԱ

(442) 10.03.2011

(540)

L-Lysine Aescinate

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

(740) Ա. Պետրոսյան

(210) 20110049

(111) 17227

(220) 21.01.2011

(151) 12.07.2011

(181) 21.01.2021

(730) «Մապ» ՓԲԸ, Արմավիրի մարզ, գյուղ
Լենուդի, ԱՄ

(442) 10.03.2011

(540)

RED & WHITE

(511)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

(210) 20110057

(111) 17228

(220) 26.01.2011

(151) 12.07.2011

(181) 26.01.2021

(730) Անհատ ձեռնարկատեր Սյուզաննա Մարտիկյան, Երևան, Աբովյան 31-25, ԱՄ

(442) 23.02.2011

(540)



(511)

դաս 35. առևտուր:

(210) 20110133

(111) 17229

(220) 10.02.2011

(151) 12.07.2011

(181) 10.02.2021

(730) «Կարո Մարգարյան» ՍՊԸ, Վայք, Զերմուկի
խճուղի 14, բն.10, ԱՄ

(442) 10.03.2011

(540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է բաց և մուգ կապույտ, երկնագույն, բաց և մուգ դեղին, կարմիր, վարդագույն, նարնջագույն, դարչնագույն, կանաչ և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 32. զովացուցիչ ըմպելիքներ:


(210) 20110140
(220) 11.02.2011

(111) 17230
(151) 12.07.2011
(181) 11.02.2021

(730) «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ, ք.
Մասիս, Արդյունաբերական հանգույց, Գոր-
ծարանային 10, AM

(442) 18.03.2011

(540)



(526) «WHITE», «CIGARETTES» և «CLASS»
գրառումներն ինքնուրույն պահպանության
օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է սև, սպիտակ և
արծաթագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ.
լուցկի:


(210) 20110141
(220) 11.02.2011

(111) 17231
(151) 12.07.2011
(181) 11.02.2021

(730) «Գրանդ տոբակո» հայ-կանադական ՀՁ
ՍՊԸ, Երևան, Սարմենի փ., տուն 9, AM

(442) 18.03.2011

(540)



(591) Նշանը պահպանվում է բաց և մուգ բոլոր,
ոսկեգույն և սպիտակ գունային համակ-
ցությամբ:

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ,
տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ.
ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց,
հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ.
մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ.
աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք).
համեմունք. սառույց.

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացա-
ռությամբ գարեջրի).

դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ.
լուցկի:

(210) 20110142
(220) 11.02.2011

(111) 17232
(151) 12.07.2011
(181) 11.02.2021

(730) «Գրանդ տոբակո» հայ-կանադական ՀՁ
ՍՊԸ, ք. Երևան, Շահամիրյանների 22, AM

(442) 18.03.2011

(540)



(591) Նշանը պահպանվում է կարմիր, սև, սպիտակ և ոսկեգույն գունային համակցությամբ:

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց.

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի).

դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ. լուցկի:

(210) 20110181

(111) 17233

(220) 22.02.2011

(151) 12.07.2011

(181) 22.02.2021

(730) Թակասո Ռաբեր Փրոդաքս Սոն Բիդ, MY
(442) 07.04.2011

(540)

ELDERJOY

(511)

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ. թղթից կամ ցելյուլոզից պատրաստված միանգամյա օգտագործման անձեռոցիկներ, բարուր և խանձարուր:

(740) Ս. Կնյազյան

(210) 20110196

(111) 17234

(220) 24.02.2011

(151) 12.07.2011

(181) 24.02.2021

(730) Բարբըր Շուգ Լթ., GB

(442) 07.04.2011

(540)



Miss Barker
OF ENGLAND

(511)

դաս 25. կոշիկեղեն.

դաս 35. ապրանքների առաջխաղացում (երրորդ անձանց համար), երրորդ անձանց համար բազմազան ապրանքների հավաքում (չի ենթադրում դրանց փոխադրումը) և ապրանքների տեղակայում՝ սպառողների կողմից դրանց ուսումնասիրման և ձեռքբերման հարմարավետության նպատակով, վերը նշված ծառայությունները տրամադրվում են մանրածախ և մեծածախ առևտրի խանութների կողմից՝ փոստով պատվիրելու համար ապրանքների կատալոգների միջոցով, ինչպես նաև առևտրի էլեկտրոնային միջոցների, ինտերնետ-խանութների և հեռուստախանութների, տվյալների համակարգչային բազաների միջոցով:

(740) Զ. Մանուկյան

(210) 20110211

(111) 17235

(220) 28.02.2011

(151) 12.07.2011

(181) 28.02.2021

(730) «ՀԳԿ փաստաբաններ» ՍՊԸ, Երևան, Նորագավիթ 19 փ., 21/1, AM

(442) 07.04.2011

(540)



(526) «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է մուգ կարմիր, մոխրագույն, սպիտակ և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 45. իրավաբանական ծառայություններ:

(210) 20110318

(111) 17236

(220) 14.03.2011


(151) 12.07.2011

(181) 14.03.2021

(730) «Տավինկո» գինու-կոնյակի գործարան ՍՊԸ, Արարատի մարզ, գ. Տափերական, AM

(442) 21.04.2011

(540)



(591) Նշանը պահպանվում է շագանակագույն, սև, բաց և մուգ ոսկեգույն, կանաչ, կապույտ և դեղին գունային համակցությամբ:

(511)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

(210) 20110389

(111) 17237

(220) 24.03.2011

(151) 12.07.2011

(181) 24.03.2021

(730) «Մանչո գրուպ» ՍՊԸ, Երևան, Արին-Բերդի նրբ. 5, N 10, AM

(442) 21.04.2011

(540)



